Հավելված

ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԻ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՈՒՂՂՈՐԴՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

Ցանկացած ծրագրի ընդհանուր բնութագրում անհրաժեշտ է ներառել ըստ սեռի տարանջատված տվյալներ հանրապետությունում /մարզում բնակվող կանանց և տղամարդկանց մասին, կատարելովպետականնահասարակականկյանքումկանանցևտղամարդկանցմասնակցությանմասինվիճակագրականտվյալների հավաքման, վերլուծության ևտարածման մասին «ՀՀ գենդերային քաղաքականության 2011-2015 թթ. ռազմավարական ծրագրի» հիմնական դրույթներից մեկը, ինչը հնարավորություն կտա գնահատել կանանց ու տղամարդկանց ներուժը, բացահայտել գենդերային անհավասարության դրսևորումները և հավասարաչափ ներգրավել կանանց ու տղամարդկանց մարզի զարգացման գործընթացներում:

Գենդերային բաղադրիչը ծրագրի մեջ ներառելու նպատակով անհրաժեշտ է ներկայացնել նաև հետևյալ տվյալները՝

- տնտեսապեսակտիվբնակչությունը ըստ սեռի,
- զբաղված/գործազուրկ բնակչությունն ըստ սեռի,
- գործազուրկ երիտասարդների թիվը ըստ սեռի,
- գրանցված գործազուրկների թիվը
- երկարաժամկետ գործազուրկների թիվը ըստ սեռի,
- կենսաթոշակառուների թիվը (ա.թ. աշխատող կենսաթոշակառուների),
- կենսաթոշակի չափերը ըստ ստացողների սեռի,
- տնային տնտեսությունների թիվը ըստ գլխավորի սեռի
- մեկ շնչին ընկնող եկամուտները տնտեսություններում ըստ գլխավորի սեռի
- աղքատությանցուցանիշները՝ ըստտնային տնտեսությունների կին/տղամարդ գլխավորի,
- կանանց և տղամարդկանց զբաղվածության մակարդակը ըստ ոլորտների :

Ըստ սեռի տարանջատված տվյալների հավաքագրումն ու ներկայացումը հնարավորություն կտա բացահայտել հանրապետությունում/մարզում առկա գենդերային խնդիրները և կնպաստի առավել ճշգրիտ ու արդյունավետ պլանավորմանը, թիրախային խմբերի ճիշտ ընտրությանը՝ հատկապես աղքատության հաղթահարման հարցում:

1. ՓՄՁ ԵՎ ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՏՎԱԾԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

ՓՄՁ և մասնավոր հատվածի զարգացման ծրագրերում գենդերային վերլուծության և ուղղորդման համար անհրաժեշտ է.

Ա)	*Ներկայացնել ՓՄՁ կին/տղամարդ աշխատողների և ղեկավարների տեսակարար կշիռը ըստ ոլորտների, ներկայացնել սկսնակ գործարարների կին/տղամարդ տարանջատված տվյալներ ըստ ճյուղերի:Այս ցուցանիշները կարևոր են աշխատանքները պլանավորելու տեսանկյունից: Օրինակ, պարզելով որ տնտեսապես ակտիվ բնակչության մեջ կանայք կազմում են 60 տոկոս և ավելին, բայց նրանց շրջանում գործազրկության տոկոսը ավելի բարձր է, բնականաբար նպատակահարմար է պլանավորել այն ճյուղերի զարգացումը, որոնցում ավելի շատ են ընդգրկվում կանայք և որոնք հնարավորություն կտան կրճատել գործազրկությունը կանանց շրջանում: Նույն մոտեցումը պետք է կիրառվի նաև տղամարդկանց համար:*
Բ)	*միջոցներ ձեռնարկել ապահովելու գենդերային հավասարության և ոչ խտրական սկզբունքների կիրառումը;*
Գ)	*վերլուծել վարկային երաշխիքներ ստացած սուբյեկտների ըստ սեռի բաժանված տվյալները և առաջարկել այնպիսի վարկային ծրագրերի ներդրում, որոնք կապահովեն մատչելի վարկեր կանանց համար, հաշվի առնելով այն, որ կանայք, որպես կանոն, սեփականատեր չեն և վարկի դիմաց չեն կարող գրավ առաջարկել,*
Դ)	*անդրադառնալ ՀՀ Գենդերային քաղաքականության հայեցակարգի, Գենդերային հավասարության ազգային ծրագրի մասնավոր հատվածի զարգացում բաժնում նախատեսված միջոցառումներին:*

Ե)	*ծրագրերի վերլուծությունը իրականացնել գենդերային զգայուն ցուցիչներով, օրինակ.* – *Տնտեսապես ակտիվ բնակչությունը ըստ սեռի* – *Վարկային երաշխիքներ ստացած սուբյեկտներն՝ ըստ սեռի* – *Խորհրդատվություն ստացած ՓՄՁ սուբյեկտների տնօրենների թվաքանակն ու բաշխվածությունն՝ ըստ սեռի* – *Ուսուցում ստացած ՓՄՁ սուբյեկտների տնօրենները և աշխատակիցներն՝ ըստ սեռի* – *Տեղեկատվական աջակցություն ՓՄՁ սուբյեկտներին, աջակցություն ստացած աշխատակիցների թիվն ու բաշխվածությունն՝ ըստ սեռի*

2. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Գյուղատնտեսության զարգացման ծրագրերում գենդերային վերլուծության և ուղղորդման համար անհրաժեշտ է.

ա)	*Բոլոր տվյալները ներկայացնել սեռատարիքային զատումով, հատուկ ուշադրություն դարձնելով կանանց ու տղամարդկանց աղքատության մակարդակին գյուղական վայրերում, հողի սեփականատերերի թվում կանանց ու տղամարդկանց տեսակարար կշռին, կանանց կողմից ղեկավարվող տնտեսությունների թվին և այլն: Ծրագրեր կազմելիս առաջնորդվել գենդերային հետևյալ ցուցիչներով՝* – *Գյուղական մշտական բնակչության թվաքանակն՝ ըստ սեռի* – *Գյուղական համայնքներում կնոջ գլխավորությամբ տնային տնտեսությունների թվաքանակը* – *Գյուղական համայնքներում դրամական եկամուտների միջին չափն՝ ըստ ՏՏ գլխավորի սեռի, մեկ շնչի հաշվով, ամսական,* – *Գյուղատնտեսությունումև անտառտնտեսությունում կանանց և տղամարդկանց միջին ամսական անվանական աշխատավարձը:*
բ)	*Գյուղատնտեսությունում կանանց ներդրումը ներկայացնելու համար հաշվի առնել. Գյուղատնտեսությունում մեկ զբաղված կնոջ հաշվով գյուղատնտեսության համախառն արտադրանքի արժեքը,*
գ	*Ապահովել գյուղատնտեսության տարբեր ոլորտներում կանանց ու տղամարդկանց ներգրավման ցուցիչներ, որոնք*

)	*հնարավորություն են տալիս գնահատել կանանց ներուժը գյուղատնտեսական արժեշղթայում, օրինակ* – *Գյուղատնտեսությունում և անտառտնտեսությունում զբաղված կանանց և տղամարդկանց տեսակարար կշիռը,* – *Ընդամենը զբաղվածների նկատմամբ գյուղատնտեսությունումև անտառտնտեսությունում կանանց և տղամարդկանց տեսակարար կշիռը:*
դ)	*Գյուղատնտեսական արտադրության կազմակերպման ձևերը և դրանց չափերի մասին խոսելիս, ներկայացնել Կանանց ու տղամարդկանց կողմից ղեկավարվող գյուղացիական տնտեսությունների թիվը, ինչպես նաև հաշվի առնել «գյուղական համայնքներում կնոջ գլխավորությամբ տնային տնտեսությունների թվաքանակը»,*
ե)	*գիտակցել, որ գյուղատնտեսական արտադրության ռիսկայնությունը, ապահովագրության բացակայությունը, հողերի մասնատվածությունը, անհրաժեշտ տեխնիկայի պակասը հատկապես ծանր են անդրադառնում կանանց կողմից ղեկավարվող տնտեսությունների վրա,*
զ)	*դիտարկել գենդերային գործոնը գյուղմթերքի համախառն բերքի ապահովման գործում բացահայտելով բերքի արտադրության կտրուկ կրճատման պատճառները,*
է)	*ուսումնասիրել անասնապահական մթերքի արտադրության ոլորտի գենդերային առանձնահատկությունները, մասնավորապես՝ տղամարդկանց միգրացիայի պայմաններում դիտարկելով այդ ճյուղում կանանց կարողությունները,*
ը)	*ուսումնասիրել կանանց կամ տղամարդկանց կողմից ղեկավարվող տնտեսությունների արդյունավետությունը ապրանքի իրացման գործում,*
թ)	*ուսումնասիրել մշակված հողերի ծավալը ըստ սեփականատերերի՝ կին/տղամարդ*
ժ)	*ներկայացնել և ուսումնասիրել ջրամատակարարման խնդիրները գենդերային տեսակետից, կատարելով կանանց ու տղամարդկանց տարբեր կարիքների գնահատում և ապահովելով գենդերային արդարության սկզբունքը ջրային ռեսուրսների կառավարման գործընթացում[1]: Ընդհանուր առմամբ, ոռոգման ու ջրամատակարարման խնդիրների լուծումը առաջին հերթին դրական ազդեցություն կունենա կանանց համար: Ազդեցությունը գնահատելու համար անհրաժեշտ է գնահատել նրանց կարիքները, այդ թվում ֆիզիկական ծանրաբեռնվածությունը և ժամանակի կորուստները, ջրամատակարարման բացակայության պայմաններում,*

[1]Այս ոլորտը կարգավորելիս կարելի է առաջնորդվել Global Water Partnership Armenia կողմից մշակված փաստաթղթով «Գենդերային հարցերը ջրային ռեսուրսների համապարփակ կառավարման (ՋՌՀԿ) գործընթացում», տես՝ http://www.cwp.am/index.php?lang=am

ի)	*համայնքներում իրականացվածծրագրերի արդյունքները և նրանցներգործությունը ներկայացնելիսհաշվիառնելշահառուների՝ կին/տղամարդ համամասնությունը,հատկապեսորմիջազգայինդոնորկազմակերպությունների կողմիցֆինանսավորվողծրագրերըորպեսկանոնունենգենդերայինբաղադրիչներ,*
լ)	*նախատեսել միջացառումներ, որոնք ուղղված կլինեն ապահովելու կանանց համար տեղաշարժման մատչելիությունը,*
խ)	*ուսումնասիրել կանանց կողմից ղեկավարվող տնտեսությունների գյուղատնտեսական տեխնիկայով ապահովվության աստիճանը և կատարել կարիքների գնահատում,*
ծ)	*ոռոգման բնագավառում և առհասարակ գյուղատնտեսության ոլորտում իրականացված ներդրումները նպատակահարմար է ներկայացնել ոչ միայն արված աշխատանքների ծավալով, այլ շահառու տնտեսությունների կտրվածքով, նաև ըստ SS-ի կին/ տղամարդ գլխավորի, ինչը հնարավորություն կտա գնահատել նրանց ներգործությունը կանանց ու տղամարդկանց վրա:*
կ)	*Վարկային ծրագրերի հասանելիությունը անհրաժեշտ է գնահատել կին/տղամարդ կամ կանանց ու տղամարդկանց կողմից ղեկավարվող տնտեսությունների կտրվածքով,*
ձ)	*Գյուղական բնակավայրերում կանանց աշխատանքային և կենցաղային պայմանների բարելավման և եկամուտների ավելացման նպատակով հաշվի առնել Գենդերային քաղաքականության 2011-2015 թթ. ռազմավարական ծրագրի[2]՝ համապատասխան դրույթները. «Աջակցել կանանց ձեռնարկատիրական գործունեությանը և խթանել կանանց տնտեսական նախաձեռնություններին ուղղված վարկային ծրագրերը՝ հատկապես գյուղական վայրերում» (կետ 21),*
ղ)	*Գյուղականբնակավայրերումկանանցզբաղվածությանմակարդակիբարձրացման, կանանցհնարավորություններինպատակայինօգտագործման, եկամուտներիավելացմաննպատակովհաշվիառնել Գենդերայինքաղաքականության 2011-2015թթ.ռազմավարականծրագրի համապատասխան դրույթները[3]* *– Համաշխարհայինբանկիհաջակցությամբիրականացվող«Համայնքներիգյուղատնտեսականռեսուրսներիկառավարմանևմ*

[2]«ՀՀ գենդերային քաղաքականության 2011-2015 թթ. ռազմավարական ծրագիր» http://www.gov.am/u_files/file/kananc-xorh/gender-strategic%20programm%202011-2015.pdf

[3]«Խթանելգյուղիկանանցաղքատությանհաղթահարմաննուղղվածծրագրերիիրականացումը /Կայունզարգացմանծրագրիշրջանակներում/, մասնավորապես, մատչելիպայմաններովտրվողվարկայինևմիկրովարկայինծրագրերիիրականացումըգյուղականբնակավայրերիսոցիալ-տնտեսականզարգացմանգործընթացներում»(կետ 23), ինչպեսնաևկարևորելԳենդերայինքաղաքականության 2013 թվականիմիջոցառումներիծրագիրը,

	րցունակության»վարկային ծրագրիշրջանակներումսպառողականկոոպերատիվներիկարողություններիհզորացման, արտներիանցանելիությանմակարդակիբարձրացման, կաթիհավաքմանև վերամշակմանկարողություններիստեղծմանմիջոցովանասնապահությամբզբաղվողկինֆերմերների աշխատանքիարդյունավետությանբարձրացում: (կետ7), – *Համաշխարհայինբանկիաջակցությամբիրականացվող«Համայնքներիգյուղատնտեսականռեսուրսներիկառավարմանևմ րցունակության» վարկայինծրագրիշրջանակներումկանանցմասնակցությամբկամղեկավարությամբիրականացվողմրցակցայինդրամաշնո րհայինծրագրերիմիջոցով՝գյուղատնտեսությանոլորտումնորտեխնոլոգիաներիներդրմամբարտադրությանարդյունավետ ությունբարձրացումևփորձիտարածում (կետ8),* – *Գյուղականբնակավայրերումկանանցաղքատությանհաղթահարմաննուղղվածծրագրերի, մասնավորապես՝վարկերիմատչելիությանբարձրացմաննուղղվածծրագրերիիրականացում (կետ 9),*
ճ)	*Հետաղետայինշրջանումկանանցևտղամարդկանցտարբերկարիքներիբացահայտմանևհավասարպայմաններիապահովման նպատակովհաշվիառնել ՀՀ Գենդերայինքաղաքականության 2011-2015 թթ. ռազմավարականծրագրի համապատասխան դրույթները.* *«Պետականռեզերվիպահուստներիձևավորմանգործընթացումմարդասիրականօգնությանբաշխմանժամանակհաշվիառնել գենդերայինհիմնախնդիրները» (կետ 27),*
մ)	*կարևորել կանանց առանցքային դերը գորգագործության, ձեռագործության, տուրիզմի ոլորտների զարգացման հարցում:*
յ)	*Գենդերային տարբերակցված մոտեցումների ներդրումը իրավիճակի գնահատման և վերլուծության ընթացքում կապահովի մշակվող ծրագրերի գենդերային զգայունությունը, ինչը իր հերթին հաջողության գրավականն է,*
ն)	*Ապահովել գենդերային արդարության սկզբունքը գյուղացիական տնտեսությունների խոշորացման և կոոպերատիվների կազմակերպման գործընթացներում,*
շ)	*Ուսումնասիրել գենդերային իրավիճակը հատկապես մսակաթնայինտավարաբուծության, պտղաբուծության, խաղողագործության, խոզաբուծության, կերարտադրության, ծխախոտագործության ոլորտներում,*
	Ծրագրերի վերլուծությունը իրականացնել գենդերային զգայուն ցուցիչներով, – *Գյուղական մշտական բնակչության թվաքանակն՝ ըստ սեռի* – *Գյուղական համայնքներում կնոջ գլխավորությամբ տնային տնտեսությունների թվաքանակը*

	– *Գյուղական համայնքներում դրամական եկամուտների միջին չափն՝ ըստ SS գլխավորի սեռի, մեկ շնչի հաշվով* – *Գյուղատնտեսությունումև անտառտնտեսությունում զբաղված կանանց և տղամարդկանց տեսակարար կշիռը, տոկոս* – *Ընդամենը զբաղվածների նկատմամբ գյուղատնտեսությունումև անտառտնտեսությունում* կանանց և *տղամարդկանց տեսակարար կշիռը, տոկոս* – *Գյուղատնտեսությունումև անտառտնտեսությունում կանանց և տղամարդկանց միջին ամսական անվանական աշխատավարձը, դրամ* – *Գյուղատնտեսությունումև անտառտնտեսությունում կանանց և տղամարդկանց միջին ամսական եկամուտը, դրամ* – *Գյուղատնտեսությունում մեկ զբաղված կնոջ հաշվով գյուղատնտեսության համախառն արտադրանքի արժեքը, դրամ* – *Պետական աջակցությամբ՝ մատչելի պայմաններով վարկավորված գյուղատնտեսական գործունեություն իրականացնող կին տնտեսավարողներ* – *Գյուղատնտեսական մասնագիտությամբ պետական և ոչ պետական միջին մասնագիտական կրթության աղջիկ ուսանողների տեսակարար կշիռը, տոկոս* – *Ագրոպարենային ոլորտում բարձրագույն պետական և ոչ պետական մասնագիտական կրթության աղջիկ ուսանողների տեսակարար կշիռը, տոկոս*

3. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Առողջապահության և սոցիալական ապահովություն զարգացման ծրագրերում գենդերային վերլուծության և ուղղորդման համար անհրաժեշտ է.

ա)	*ներկայացնել կին/տղամարդ տեսակարար կշիռը հիվանդությունների, ծնելիության և մահացության ցուցանիշներով: Այս ցուցանիշները կարևոր են, քանզի հանրային առողջության վիճակի մասին պատկերացում առաջին հերթին կարելի է կազմել՝ հենվելով այնպիսի ցուցանիշների վրա, ինչպիսիք են ծնելիությունը, մահացությունը, այդ թվում մայրական մահացության, սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների առկայության և բնակչության բնական աճը: Ավելին, մարզի բնակչության հիվանդությունների գենդերային պատկերը կնպաստի ֆինանսական ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացմանը, կանանց և տղամարդկանց*

	առողջապահական կարիքների ավելի արդյունավետ հաշվառմանը և լուծմանը,
բ)	*ներկայացնել մանկական, մինչև 5 տարեկան երեխաների մահացությունը, ինչպես նաև կյանքի սպասվող տևողությունը ըստ սեռի,*
գ)	*վերարտադրողական առողջության մասին գրելիս հաշվի առնել նաև տղամարդկանց շրջանում ամլության խնդիրը և նախատեսել հատուկ հետազոտություններ և բժշկական օգնություն ոչ միայն մայրական, այլ նաև տղամարդկանց առողջության ապահովման համար,*
դ)	*ներկայացնել և հաշվի առնել ներկայումս աշխատող բժիշկ-մասնագետների սեռատարիքային կազմը, բաժանելով այն ըստ մասնագիտությունների և հիերարխիայի,*
ե)	*անհրաժեշտ է ներկայացնել ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի տարածվածությունը և նոր գրանցված դեպքերը ըստ սեռի, քանզի կանխարգելումը գրեթե անհնար է առանց գենդերային բաղադրիչի ներառման (օրինակ. ՄԻԱՎ-ով ապրողների մեծ մասը արտագնա աշխատանքների մեկնող տղամարդիկ են, կամ իրենց կանայք),*
զ)	*սոցիալական պաշտպանության ոլորտում ներկայացնել խոցելի խմբերում կանանց և տղամարդկանց տեսակարար կշիռը, օգնությունը ավելի նպատակային դարձնելու համար,*
է)	*անդրադառնալ ՀՀ Գենդերային քաղաքականության հայեցակարգի, Գենդերային հավասարության և Ընդդեմ գենդերային բռնության ազգային ծրագրերի առողջապահություն բաժնում նախատեսված միջոցառումներին:*
թ)	*Առողջապահության ոլորտի ծրագրերի վերլուծությունը իրականացնել գենդերային զգայուն ցուցիչներով, օրինակ* <u>Քանակական ցուցիչներ</u> – *Ծնելիությանցուցանիշն՝ ըստսեռի* – *Հղիությանարհեստականընդհատումներ,այդթվում՝պայմանավորվածպտղիսեռայինպատկանելիությամբ* – *Մանկականևմինչևհինգտարեկաներեխաներիմահացությունն՝ըստսեռի* – *Առողջապահականծառայություններիօգտագործումըսեռատարիքայինկտրվածքով,* – *Բնակչությանմահացությանևհիվանդացությանսեռատարիքայինևպատճառականկառուցվածքը* – *Հաշմանդամությանսեռատարիքայինևպատճառականկառուցվածքը* – *ՄԻԱՎ/ՁԻԱՀ՝ տարածվածությունը՝ նորգրանցվածդեպքերն՝ըստսեռի* – *Կյանքիսպասվողտևողությունն՝ըստսեռի* – *Կանանցքաղցկեղովհիվանդացությանցուցիչ* – *Տարափոխիկհիվանդություններըստսեռի*

	Որակական ցուցիչներ – *Առողջապահական ծախսերի % ՀՆԱ-ի և բյուջեի նկատմամբ* ՄԻԱՎ/ՁԻԱՀ վերաբերյալ աղջիկների և տղաների գիտելիքը/ իմացությունը
ժ)	*Սոցիալական պաշտպանության ոլորտի ծրագրերի վերլուծությունը իրականացնել գենդերային զգայուն ցուցիչներով, օրինակ* Քանակական ցուցիչներ – *Տնտեսապես ակտիվ բնակչությունն՝ ըստ սեռի* – *Զբաղվածների սեռատարիքային կազմը* – *Զբաղվածությունը ըստ սեռի և սեփականության ձևերի* – *Զբաղվածությունը քաղաքային ոչ ֆորմալ հատվածում՝ ըստ սեռի* – *Սոցիալական ապահովագրության պարտադիր վճարներ կատարողներն՝ ըստ սեռի* – *Կանանց և տղամարդկանց գործազրկությանմակարդակը* – *Կանանց և տղամարդկանց միջին ամսական անվանական աշխատավարձների հարաբերակցությունն՝ ըստ տնտեսական գործունեության տեսակների* – *Երիտասարդական գործազրկությունն՝ ըստ սեռի* – *Աշխատող կենսաթոշակառուների թվաքանակն՝ ըստ սեռի, կենսաթոշակի չափերը* – *Հաշմանդամության կենսաթոշակառուներն ըստ սեռի՝ կենսաթոշակի չափերը* – *Աղքատության ցուցիչներն՝ ըստ տնային տնտեսության գլխավորի սեռի* Որակական ցուցիչ – *Սոցիալական ծառայություններից օգտվողներիգոհունակությունը ըստ սեռի*

4. ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Կրթության զարգացման ծրագրերում գենդերային վերլուծության և ուղղորդման համար անհրաժեշտ է.

ա)	*Կրթության ոլորտի իրավիճակի վերլուծությունում ավելացնել կրթություն ստանալու հավասար մատչելիությունը, անկախ սեռից, էթնիկական կամ սոցիալական ծագումից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, հաշմանդամությունից, սոցիալական բնույթի այլ հանգամանքներից,*
բ)	*նշել, որ նախադպրոցական հիմնարկների առկայությունը զարգացման գործընթացներում կանանց մասնակցության ընդլայնման կարևոր նախադրյալներից է,*
գ)	*կարևորել կանանց ներգրավածությունը նախադպրոցական կրթության կազմակերպման հարցում համայնքային որոշումների կայացման գործընթացում, առավել ևս, որ մանկապարտեզների բացակայությունը խոչընդոտում է երիտասարդ մայրերի աշխատանքի իրավունքի իրացումը և հանրային կյանքին համարժեք մասնակցությունը,*
դ)	*գիտակցել, որ մասնագիտական կրթությամբ մասնագետ կադրերի ապահովման խնդրի լուծման ուղղությամբ ձեռնարկվող միջոցներից մեկը կարող է հանդիսանալ երիտասարդ աղջիկների նպատակային ուսուցման կազմակերպումը՝ համայնքային բյուջեի հաշվին, երաշխավորելով տվյալ կադրի վերադարձը ծննդավայր: Իսկ, վերապատրաստման գործընթացներում կարելի է ներգրավել նաև դպրոցների օպտիմալացման հետևանքով գործազուրկ կին/մանկավարժներին, այդ թվում թոշակառուներին,*
ե)	*նախադպրոցական որակյալ կրթության ապահովման նպատակով խրախուսել այլընտրանքային ծառայությունների կազմակերպմանն ուղղված կանանց անհատական և հասարակական նախաձեռնությունները,*
զ)	*ներկայացնել կրթական հաստատություններում ներգրավված ուսուցիչների սեռատարիքային կազմը. Ոլորտը ակնհայտ ֆեմինիզացված է, ինչը խնդիրներ է առաջացնում երեխաների դաստիարակության և սոցիալականացման հարցում: Այստեղ կարևոր են ծրագրեր՝ տղամարդ ուսուցիչների ներգրավման ուղղությամբ:*
է)	*ներկայացնել սեռատարիքային բաժանումով վիճակագրական տվյալներ բոլոր մակարդակների կրթական հաստատությունների համար. նախակրթական, տարրական, միջնակարգ/ հիմնական և ավագ դպրոցում, ինչպես նաև բուհական համակարգում: Տվյալ վիճակագրության և դրա դինամիկայի վերլուծությունը կարևոր է՝ բացահայտելու, մասնավորապես. հիմնական դպրոցում երեխաների ընդգրկվածության նվազման միտումը, ավագ դպրոցի հասանելիության խնդիրը, աղջիկ երեխաների ընդգրկվածության նվազման վտանգը, ինչը կարող է կապված լինել տնային աշխատանքներում նրանց ներգրավման (օրինակ. ընտանիքի փոքր անդամների խնամք) կամ համակարգի օպտիմալացման հետևանքով բնակության վայրից դպրոցի զգալի հեռավորության հետ (սա առանձնապես վերաբերում է գյուղական բնակավայրերին) և այլն:*

ը)	*կատարել կարիքների ուսումնասիրություն պարզելու՝ թե հատկապես բնակչության որ շերտերն են ցանկանում ստանալ համակարգչային գիտելիքներ ըստ սեռի, տարիքի, զբաղվածության:*
թ)	*ներկայացնել, թե կրթության ոլորտում դոնոր հանրության աջակցությամբ մարզում իրականացվող ծրագրերի շահառուների սեռատարիքային կազմը, իսկ հաշմանդամություն ունեցող երեխաների դեպքում այն առավել կարևոր է, որպեսզի բացահայտվեն հաշմանդամություն ունեցող աղջիկների և տղաների ուսումնական կարիքները:*
ժ)	*արտադպոցական կրթության հնարավորությունը պետք է հասանելի լինի թե՛ իգական, թե՛ արական սեռի ներկայացուցիչներին,*
ի)	*կազմակերպել գենդերային հավասարությանը վերաբերող դասընթացներ կրթության ոլորտի ներկայացուցիրների, ինչպես նաև ավագ դպրոցի և բուհական մակարդակի երիտասարդների համար,*
լ)	*Ուսումնասիրել նախնական և միջին մասնագիտական կրթություն ստացողների կարիքները և պահանջարկը ըստ սեռի:*
խ)	*անդրադառնալՀՀ Գենդերային քաղաքականության հայեցակարգի, Գենդերային հավասարության և Ընդդեմ գենդերային բռնության ազգային ծրագրերի «Կրթություն» բաժնում նախատեսված միջոցառումներին:*
	Կրթության ոլորտի զարգացման ծրագրերի վերլուծությունը իրականացնել գենդերային զգայուն ցուցիչներով, օրինակ <u>Քանակական ցուցիչներ</u> – *Ընդգրկվածությունընախադպրոցական հաստատություններում՝ ըստսեռի* – *Նախադպրոցական հաստատություններ չհաճախող երեխաներն՝ ըստ սեռի* – *Համախառն ընդգրկվածությունը տարրական դպրոցում՝ ըստ սեռի* – *Համախառն ընդգրկվածությունը հիմնական դպրոցում՝ ըստ սեռի* – *Կրթականհամակարգիցդուրսմնացածները (տարրական,հիմնականդպրոց)՝ըստսեռի* – *Համախառն ընդգրկվածություն ը ավագ դպրոցում՝ ըստ սեռի* – *Համախառն ընդգրկվածությունը նախնական (արհեստագործական) և* – *միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում՝ ըստ սեռի* – *Համախառն ընդգրկվածությունը բուհական համակարգում՝ ըստ սեռի* – *Հետբուհական կրթության ոլորտում սովորողների թվաքանակն ըստ սեռի, 10, 000 բնակչի հաշվով*

	– *Բնակչության կրթական մակարդակն՝ ըստ սեռի և առանձին տարիքային խմբերի* – *Կանանց տեսակարար կշիռը հանրակրթական դպրոցների ուսուցիչների ընդհանուր թվաքանակում* – *Տղամարդկանց տեսակարար կշիռը հանրակրթական դպրոցների ուսուցիչների ընդհանուր թվաքանակում* – *Կանանց տեսակարար կշիռը բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատությունների պրոֆեսորադասախոսական անձնակազմի թվաքանակում* – *Տղամարդկանց տեսակարար կշիռը բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատությունների պրոֆեսորադասախոսական անձնակազմի թվաքանակում* *<u>Որակական ցուցիչներ</u>* – *Նախադպրոցական հաստատություններում 5 տարեկանների ընդգրկվածության գործակիցն՝ ըստ սեռի* – *Հիմնական դպրոցից հետո ուսումնառությունը շարունակողների տոկոսն՝ ըստ սեռի* – *Ավագ դպրոցն ավարտողների տոկոսը՝ թղթակցող տարում 10-րդ դասարան ընդունվածների թվաքանակի նկատմամբ՝ ըստ սեռի* – *Աղջիկների և տղաների գիտելիքի մակարդակը/ իմացությունը* – *Կրթամակարդակիևաղքատության բաշխվածությանգենդերայինպատկերը*

5. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ, ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման և քաղաքացիական հասարակության զարգացման ծրագրերում գենդերային վերլուծության և ուղղորդման համար անհրաժեշտ է.

ա)	*անդրադառնալՀՀ գենդերային քաղաքականության հայեցակարգի և ՀՀ գենդերային հավասարության ազգային ծրագրի տեղական ինքնակառավարում բաժնում նախատեսված միջոցառումներին, կատարելով համապատասխան փոփոխություններ,*
բ)	*տարածքային կառավարման բնագավառում գործունեության կարևորագույն ուղղություններն պետք է ներառեն ըստ սեռիտարանջատված տվյալների վերլուծության հիման վրա մշակված և գենդերային հավասարության*

	ապահովմանը ուղղված միջոցառումներ,
գ)	*ՀՀ տարածքային կառավարման և արտակարգիրավիճակներիև ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարների «ՀՀ մարզպետարաններում և Երևանի քաղաքապետարանում գենդերային հարցերով զբաղվող մշտական հանձնաժողովի օրինակելի կանոնադրությունը հաստատելու մասին» համատեղ հրամանին մարզպետարանում և համայնքներում գենդերային հարցերով հանձնաժողովների ստեղծման համար,*
դ)	*կազմել մարզում գենդերային հավասարության ապահովմանն ուղղված տարեկան գործողությունների պլան,*
ե)	*մարզպետարաններում ձևավորվող Մոնիտորինգի և գնահատման համակարգերին առաջարկել չափել առաջընթացը նաև գենդերային ցուցիչներով*[4]*,*
զ)	*բոլոր տվյալները ներկայացնել ըստ սեռի տարանջատված, հատուկ ուշադրություն դարձնելով՝* – *մարզպետարանների աշխատակազմի գենդերային կտրվածքին* – *քաղաքապետարաններում աշխատողների թվաքանակի բաշխմանը ըստ սեռի և պաշտոնների* – *գյուղապետարաններում աշխատողների թվաքանակի բաշխմանը ըստ սեռի և պաշտոնների* – *մշտապես գործող հանձնաժողովների գենդերային կազմին*
է)	*ներկայացնել և ուսումնասիրել գյուղական համայնքների բնակչության տվյալները ըստ բնակչության թվի և սեռի*
ը)	*հենվելով ըստ սեռի տարանջատված տվյալների վրա կատարել համայնքային բյուջեների գենդերային ուղղորդում, կատարելով գումարների բաշխումը ըստ կանանց և տղամարդկանց կարիքների*
թ)	*համայնքային զարգացման ծրագրերը համաձայնեցնել ՀՀ գենդերային քաղաքականության ռազմավարության դրույթների հետ,*
ժ)	*ընդգծել կանանց դերը համայնքային զարգացման մեջ,*
ի)	*կարևորել կանանց միջհամայնքային ցանցերի ստեղծումը,*
լ)	*ապահովել հավասար պայմաններ և քաջալերել կանանց մասնակցությունը ավագանու և համայնքի ղեկավարի ընտրություններին,*
խ)	*խրախուսել կանանց քաղաքացիական ակտիվությունը հասարակական-քաղաքական կազմակերպություններին և*

[4] «Գենդերային զգայուն և տարաբաժանված ցուցիչներ» հաստատված ՀՀ ԱՍՀ նախարարի թիվ 93/ Ա-1 որոշումով (19-ը հոկտեմբերի 2012թ.):

	համայնքային միջոցառումներին մասնակցության առումով,
ծ)	*ապահովել կանանց հիմնախնդիրներով զբաղվող հասարակական կազմակերպությունների մասնակցությունը համայնքային հանձնաժողովներում:*
	Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման ոլորտիզարգացման ծրագրերի վերլուծությունը իրականացնել գենդերային զգայուն ցուցիչներով, օրինակ – *Քաղաքային տեղական ինքնակառավարման մարմիններում աշխատողների թվաքանակի բաշխումն՝ ըստ սեռի և պաշտոնների* – *Գյուղական տեղական ինքնակառավարման մարմիններում աշխատողների թվաքանակի բաշխումն՝ ըստ սեռի և պաշտոնների* – *Երևանի քաղաքապետարանում աշխատողների թվաքանակի բաշխումն՝ ըստ սեռի և պաշտոնների* – *Մշտապես գործող հանձնաժողովների կազմն՝ըստ սեռի*

6. ՄԱՐԶԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Մարզային և համայնքային ենթակառուցվածքների զարգացման ծրագրերում գենդերային վերլուծության և ուղղորդման համար անհրաժեշտ է.

ա)	*Գյուղական բնակավայրերում կանանց աշխատանքային և կենցաղային պայմանների բարելավման և եկամուտների ավելացման նպատակով դիտարկել բարելավել գյուղատնտեսության և գյուղական ենթակառուցվածքները, ընդլայնել կանանց մասնակցության հնարավորությունները գյուղական բնակավայրերի սոցիալ-տնտեսական զարգացման գործընթացներում,*
բ)	*ներկայացնել մարզում իրականացված ծրագրերի շահառուների սեռատարիքային կազմը, ներառելով՝ առանձին տվյալներ ճանապարհաշինարարական աշխատանքների շահառուների, ըստ սեռի, ինչպես նաև գյուղաբնակ տնային տնտեսությունների համար միջին հեռավորությունը մինչև մոտակա բուժկետը, հիվանդանոցը, դեղատունը, գյուղապետարանը, մանկապարտեզը, միջնակարգ դպրոցը, գյուղարտադրանքի վաճառքի շուկա, և վերջապես բանկ/ֆինանսական ծառայություն,*

գ)	*գնահատել անվտանգ խմելու ջրից օգտվող գյուղաբնակ տնային տնտեսությունների հնարավորությունները ըստ ՏՏ-ի անդամների սեռի և տարիքի, հաշվի առնելով այն հանգամանքը, որ գյուղական վայրերում կանանց իրավունքների և հնարավորությունների ընդլայնումը սերտորեն կապված է ջրի մատչելիության հետ:[5] Ջրազուրկ վայրերում, որպես կանոն, կանայք են պատասխանատու ընտանիքի բոլոր անդամներին ջուր ապահովելու համար, հետևապես նրանց այդ լրացուցիչ ծանրաբեռնվածությունը, ներառյալ ֆիզիկական ջանքերը ու ժամանակային կորուստը, լուրջ խոչընդոտ են հանդիսանում տնտեսական այլ գործունեություն ծավալելու առումով: Բացի այդ ջրամատակարարման բացակայությունը դիտարկվում է որպես ջրօգտագործման իրավունքի խախտում,*
դ)	*ոռոգման ջրի իրավունքը նվազ կարևոր չէ, քան հողի իրավունքը, քանի որ գյուղական շրջանների մեծ մասում մշակաբույսերի խնամքով հատկապես կանայք են զբաղվում: Ապացուցված փաստ է նաև, որ ջրի և սանիտարիայի մատչելիությունը բարձրացնում են կանանց ինքնագնահատականը, նվազեցնում նրանց ֆիզիկական ծանրաբեռնվածությունը, ժամանակ ստեղծում իրենց որպես ֆերմեր դրսևորելու համար, հնարավորություն տալիս գյուղաբնակ կանանց բարելավել իրենց տնտեսական վիճակը, ընտանիքներին եկամուտ ապահովել:*
ե)	*հաշվի առնել կանանցդերը նաև ջրային ռեսուրսների կառավարման հարցում:[6]*

7. ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Բնապահպանությունոլորտի զարգացման ծրագրերում գենդերային վերլուծության և ուղղորդման համար անհրաժեշտ է.

ա)	*նպաստել բնակչության բնապահպանական իրազեկության ու կրթվածության ապահովմանը հաշվի առնելով այն, որ*

[5] Անվտանգ խմելու ջրի մատչելիության բարձրացումը հանդիսանում է նաև ՀԶԾ-ի թիրախ նպատակներից մեկը (ՀԶՆ-ների առաջընթացի ազգային զեկույցից, 2010):

[6] Տես՝ «Գենդերային հարցերը ջրային ռեսուրսների համապարփակ կառավարման (ՋՌՀԿ) գործընթացում» հետազոտությունը , Global Water Partnership Armenia http://www.cwp.am

	երեխաների դաստիարակությամբ հիմնականում զբաղված են կանայք և, որ չափազանց կարևոր է բնապահպանական ծրագրերի իրականացումը հատկապես կանանց շրջանում և կանանց ներգրավմամբ,
բ)	*բացահայտել և անդրադառնալ անտառային ռեսուրսների կառավարման համակարգում կանանց դերի ու ներուժի կարևորությանը,*
գ)	*բացահայտել և անդրադառնալ շրջակա միջավայրի պահպանությամբ զբաղվող ՀԿ-ներում կանանց մասնակցությանը,*
դ)	*գնահատել կանանց մասնակցությունն ու ներուժը մարզում իրականացված բնապահպանական ծրագրերում,*
ե)	*ընդլայնել կանանց ներգրավվածությունը բնապահպանական մտածողության ձևավորմանը նպատակաուղղված ծրագրերում,*
զ)	*ընդլայնել կանանց քաղաքացիական մասնակցությունը բնապահպանական վերահսկողություն իրականացման և կոռուպցիոն ռիսկերի հաղթահարման գործում,*
է)	*կարևորել կանանց դերը թունաքիմիկատների ռացիոնալ և գրագետ օգտագործման հարցում, թեպետ քիմիկատների խնդիրը ընդհանրապես չի հիշատակվում ծրագրում,*
ը)	*բնապահպանական ոլորտում ստեղծվող խորհրդակցական մարմնում ապահովել կանանց ու տղամարդկանց հավասարակշռված ներկայացվածությունը,*
թ)	*ապահովել կանանց մասնակցությունը նաև բնապահպանական փորձաքննությունիրականացնողմարմիններում,*
ժ)	*բացահայտել և անդրադառնալ կանանց դերին ու ներուժին էկոտուրիզմի զարգացման գործընթացներում: Ապահովել կանանց մասնակցությունը սանիտարական նորմերի պահպանմանը, աղբահանությանը, կեղտաջրերի մաքրմանը վերաբերող ծրագրերում և որոշումների կայացմանը,*
ի)	*բարձրացնել բնակչության իրազեկումը կլիմայի փոփոխության հետևանքների մասին: Գնահատել կլիմայի փոփոխության հետ կապված աղետների ազդեցությունը կին/տղամարդ կտրվածքով: Կանայք մի կողմից հանդիսանում են կլիմայի փոփոխություններից առավել տուժող և խոցելի բնակչության մաս, մյուս կողմից՝ բոլոր միջազգային ծրագրերում նրանք դիտարկվում են որպես այդ փոփոխություններին հարմարվելու հիմնական ռեսուրս,*
լ)	*ապահովելաղետներիռիսկերիկառավարմանոլորտումգենդերայինուղղորդմանևվերլուծության, գնահատմանևմշտադիտարկման մեխանիզմների ներդրումը մարզայինևհամայնքայինմակարդակներով:*

8. ՀԱՆԳՍՏԻ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Հանգիստ, մշակույթ և սպորտոլորտների զարգացման ծրագրերում գենդերային վերլուծության և ուղղորդման համար անհրաժեշտ է.

ա)	*ավելացնել կրթական ոլորտի հետ սերտորեն կապված իրազեկության բարձրացման միջոցառումները, նշելով, այն քարոզարշավները, որոնք ուղղված են ընդդեմ գենդերային բռնության, և նպաստում են գենդերային հավասարության հաստատմանը,*
բ)	*մարզում կրթական, սոցիալական և մարզամշակութային միջոցառումների համատեքստում կարևորել նաև գենդերային հավասարությանն ուղղված միջոցառումները,*
գ)	*ապահովել գենդերային հավասարության պահպանումը երիտասարդների սոցիալական կայացման, նրանց ստեղծագործ ներուժը հասարակության շահերին առավել լիարժեք ծառայեցնելու համար,*
դ)	*ապահովել կանանց և տղամարդկանց հավասար մասնակցության հնարավորությունը կազմակերպվող մշակութային և սպորտային միջացառումներին, ինչպես մարզային, այնպես էլ համայնքային մակարդակում,*
ե)	*ապահովել կանանց մասնակցությունը համայնքում նախատեսվող սպորտային կառույցների մասին որոշումների կայացմանը. (Հաճախ որոշումը կայացվում է միայն տղամարդկանց կողմից և միայն «ֆուտբոլի դաշտ» կառուցելու մասին):*
զ)	*աջակցել կանանց առաջմղման մեխանիզմների մշակման և կանանց տնտեսական և քաղաքական լիդերությանը նպաստող ծրագրերի իրականացմանը:*

9. ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Զբոսաշրջության ոլորտի զարգացման ծրագրերում գենդերային վերլուծության և ուղղորդման համար անհրաժեշտ է.

ա)	*գնահատել մարզում զբոսաշրջության զարգացման դրական և բացասական հետևանքները կանանց և տղամարդկանց համար,*
բ)	*զբոսաշրջության զարգացման բոլոր ծրագրերում ներառել գենդերային բաղադրիչը,*
գ)	*Զբոսաշրջության զարգացման. առաջնահերթություններում, համայնքային զարգացում ենթաբաժնում կարևորել գենդերային վերլուծություն, քանզի զբոսաշրջության զարգացումը նպաստելով տղամարդկանց աշխատանքային միգրացիայի կրճատմանը, դրական ազդեցություն կունենա ընտանիքների պահպանման և ամրապնդման համար:*